Նա ոչինչ չպատասխանեց: Բայց անկարծ մի կատաղի ցնցում փոխեց նրա հեզ, ցաւակցական դէմքը, եւ նա խօսեց լի սպառնալիքով:

— Ֆարհատ, աստոած վկայ, ես նրա հօրը շան պէս կը սատկացնեմ, թո՛ղ նա տէրտէր լինի, մեղքից չեմ վախենայ, գիտեմ, որ նա սատանայ է:

— Բայց նա Սօնայի հայրն է:

— Ղորդ է, ես Սօնային շատ եմ սիրում, նա լաւ աղջիկ է, եթէ ես մի քոյր ունենայի, նրանից աւելի չէի սիրի, բայց իմ հօրը աւելի եմ սիրում...

Մարօի կատաղութեան պատճառը յայտնի էր. բայց նրա վրդովմունքը ինձ ծիծաղելի էր թւում, եւ ես փորձելու համար հարցրի.

— Տէրտէրն ինչո՞վ է մեղաւոր:

— Դու կարծում ես, ես չլսեցի՞, — պատասխանեց նա. — ես բոլորը իմանում եմ, թէ որպիսի՛ խոր (հօր) է ուզում տէրտէրը վարել իմ հօր, Կարօյի եւ նրա ընկերների համար: Նրանք ի՞նչ են արել, ինչո՞վ են մեղաւոր:

Ես աշխատեցի հանգստացնել կատաղած Մարօին, որից ամէն բան սպասելի էր:

— Չէ՛, Մարօ, այդ լաւ չէ, ինչ որ դու մտքիդ դրել ես: Ճշմարիտ է, քո հօր դէմ դաւադրութիւն կայ, բայց մենք պէտք է խոհեմ լինենք, մենք պէտք է շտապենք շուտով վերադառնալ տուն եւ բոլորը յայտնել քո հօրը:

— Շտապել պէտք չէ, նա մի օրից յետոյ բոլորը կ'իմանայ, — պատասխանեց Մարօն անփոյթ կերպով: — Բայց ես իմ ուխտածը պէտք է կատարեմ...

— Այդ թող մնա՛յ , ինչ որ դու ուխտել ես: Բայց դու ինձ այն ասա՛, թէ քո հայրն որտեղի՞ց կարող է իմանալ:

— Ես նրա մօտ մարդ ուղարկեցի:

— Ե՞րբ, ո՞ւմը:

— Մըհէն կէս ժամ առաջ այստեղ էր. նա այս կողմով անցնելով, եկել էր սուրբ աստոածածինը համբուրելու: Նրան ասել էին, թէ մենք եւս ուխտաւորների թւումն ենք. տեսայ՝ ուրախ–ուրախ գալիս է: Որտեղի՞ց էր գալիս, նա ինձ չասաց, բայց շատ ուրախ էր: Ես պատմեցի նրան իմ լսածները հօրս մասին: Նա բարկացաւ, եւ էլ չսպասեց, որ գնայ սուրբ աստոածածինը համբուրէ, իսկոյն վեր առաւ իր ահագին լախտը եւ շտապեց հօրս մօտ:

— Բայց նա իմանո՞ւմ էր, հայրդ որտեղ է:

— Իմանում էր: Ասաց. «Էդ ի՞նչ սատանայական բան է, ես մի օրից յետոյ բոլորը կը պատմեմ որսորդին»: Թէեւ հայրս այժմ Շատախի մէջն է գտն-